
ԱՐԴԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայտնի է, որ Ադրբեջանը մշտապես վարել է հակահայ քաղաքականություն», որը դրսևորվել է ոչ միայն ցեղասպանությամբ, այլև՝ հայկական մշակույթի ոչնչացմամբ, մասնավորապես՝ պատմամշակութային արժեք հանդիսացող միջնադարյան հուշակոթողների ավերումներով: Ստորև ներկայացվող նամակներից պարզ է դառնում, որ այդ երևույթը վաղուց է սկսվել (նամակներից առաջինը գրված է 1959 թ., երկրորդը՝ 1965 թ.):

Գիտական հանրությանն են ներկայացվում մեծանուն գիտնական, վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանին ուղղված երկու նամակները՝ գրված Դաշքեսանի Կուշչի (գյուղ Ելիզավետպոլի նահանգի Ելիզավետպոլ գավառում, նախկինում՝ Հին Խաչակապ) գյուղից՝ Դալլաքյան Սուրենի և Սադիան գյուղից Շահեն Մասիսենցի կողմից: Նրանք արտագրել ու ոչնչացումից փրկել են 7 վիմագիր, որոնցից 5-ը առաջին անգամ է ներկայացվում գիտական հանրությանը: Նամակներում կատարվել են կետադրական և ուղղագրական շտկումներ:*

ԿԼԱՐԱ ԱՍԱՏՐՅԱՆ,
ՀԱՅԿ ՀԱԿՈՒԹՅԱՆ

– 1 –


Հայկական ՄՍՌ-ի
Գիտությունների Ակադեմիայի
Պատմության, հայագիտության բաժնին

Հարգելի՛ ընկեր գիտնական պատմաբաններ, խնդրում եմ մի քանի բոլորով Ձեր թանկագին ուշադրությունը: Տողերս Ադրբեջանական ՄՍՌ-ի Դաշքեսանի շրջանի Կուշչի (Հին Խաչակապ) գյուղի բնակիչ մասնագիտությամբ անասնաբույժ Դալլաքյան Սուրեն Նիկոլայի, տեղեկացնում է Ձեզ, կամ որ Դուք տեղյակ եք Հին պատմական աղբյուրներից «Գարթման» կամ «Ֆարխոս» գավառի մասին, ո-


րը բնաջնջվել և ամբողջովին կործանվել է պարսկական զորավոր Ադամամնադ խան-խադիմի զորքերի կողմից 1794–1795 թվականներին: Գարթման կամ Ֆարխոս գավառի գյուղարանքի բոլոր քրիստոնյա հայկական հնությունները միջև այժմ պաշտպանվել են ինչպես օրինակ եկեղեցիների, վանքերի, մատուռների, սրբավայրերի, գերեզմանատների խաչքարերի զարդաքանդակները, փորագրերը և արձանագրությունները, իսկ հիմա աչքի է զարնվում զանազան տեսակի բարբարոս վերաբերմունք տեղական թե՛ հայ, թե՛ թուրք-ազերբեջանցի բնակիչներից, որպեսզի փաստեր (էջ 2) կարող են ծառայել գերեզմանատների հուշարձանների կոտրատում շենքերի գոմերների կամ աղբյուրների կառուցման համար: Այս տեսակի օգտագործման համար կամ թե դիտմամբ ֆլզման համար հանում են եկեղեցիների կամ վանքերի անկյունաքարերից մի քանի հատ, կամ կամարաքարերից մի քանի հատ, որպեսզի հազարամյակների, կամ հարյուրամյակների պատմական հայ ազգային հուշարձանները, շուտ կործանվեն իրենց հետ գերեզման գլորվեն բոլոր անցյալի հայխոս հիշատակարանները: Այսպիսի դեպքեր տեղի են ունեցել Կուշի գյուղում «Բնի-հողի» աղբյուրների ավազանաքարերը կոտրատած և բերած գերեզմանաքանդակահուշարձաններ են Հին Հանքափոր գյուղի գերեզմանատնից: Կուշիից 2 կմ հեռավորության վրա գտնվում է Թարգմանիչ վանքը, որի մուտքի դռան անկյունաքարերն անբարեխիղճ մարդիկ հանել և երկանքներ են շինել ձավար ծեծելու համար: Շամքոռ գետի վերին հոսանքի Չանաղյի հսկայական վանքի քարերով և կործանված գյուղի գերեզմանատան քանդակազարդ տապանաքարերով պատրաստել են անասնագու: Խնդրում ենք հնությունների պաշտպանման համար մի որոշ չափով ահազանգեք պետական օրգաններին վերադիր կարգով, որպեսզի ժողովրդի մեջ անբարեխիղճ մարդկանց կարգի հրավիրեն կամ տուժանքի ենթարկեն:

(էջ 3) Ես, որպես հնություններով և առհասարակ պատմությունով հետաքրքրվող մարդ, իմ պարտքս եմ համարում Ձեզ հայտնելու և խնդրում եմ ներքոհիշյալ արձանագրությունը իր տարեթվով ուղարկեք ինձ որպեսզի ես էլ հասկանամ: Սույն արձանագրությունը արտանկարել եմ հին Գարթմանգա գավառի Շամքոռ գետի ափին գտնվող կործանված «Ֆաֆոց» գյուղի կամ Նոր-Չագլիկի մինչև այժմ կանգուն եկեղեցու մուտքի քարի արձանագրությունից:


1. ԿԱՄԱԻՆ ԱՅ՝ ՄԵՔ ՓԱՓԵՑՈՑ¹ / ԺՈՂՈՎ[ՈՒ]ՐԴՍ ՄԻԱԲԱՆ ՇԻՆԵՑԱՔ / ՄԲ² ԵԿ[ԵԼՂԱԵԱՑԱԻ]Ս³: Հ[Ա]ՅՐ[Ա]Պ[Ե]ՏՈՒԹԵՑՆ⁴ / ՊԵՏՐՈՍԻ: ՁԵՌԱՄԲ ՍԱՐԳԻՍ/ Վ[Ա]ՐԴ[Ա]Պ[Ե]ՏԻՆ: ՅԻՇ-ԽԱՆ/ՈՒԹԵՍ ՄՐԹՈՒԶԱ⁵ ՂՈՒԼԻ/ ԽԱՆԻՆ: Յ[ԻՇ]ԵՑ[Է]Ք Ի ՔՍ ՏԱՆՈՒՏ[Է]Ր ՎՐԴԱՆԵՍՆ⁶ ԵԻ⁷ ԿՈՂԱԿԻՑ ՄԱՐԵԱՆՆ⁸:



2. Յ[Ի]Շ[Ե]ՑԵՔ Ի ՔՍ ՄԻՆ/ԱՍ ՄԻԱԿԵՑՆ:




3. Ա. Ն. Ռ. Ի ՔՍ⁹:




¹ Ս. Կ ա ր ա պ Է տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 267 – ՓԻՓԵՑՈՑ:
² Նույն տեղում – չիք:
³ Նույն տեղում – ՁԵԿԵՂԵՑԻՍ:
⁴ Նույն տեղում – Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ:
⁵ Նույն տեղում – ՄՈՒՐԹՈՒԶԱ:
⁶ Նույն տեղում – ՎԱՐԴԱՆԷՍՆ:
⁷ Նույն տեղում – և:
⁸ Նույն տեղում – ՄԱՐԵԱՆ:
⁹ Այս հասպակումը բացել չհաջողվեց, բացառությամբ «ի Քրիստոս» արտահայտության:

4. Յ[Ի]Շ[Ե]ՑԵՔ¹⁰ Ի ՔՍ ԳԱԻՐԿԻՆ: / ԵԻ¹¹ ՆԱՏՈՒՐՆ¹²: ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՍ ԱՌԱՔԵ/ԼՆ¹³ ԵԻ¹⁴ ՈՐԴԵՆ¹⁵ ԻԻՐ ՅՈՂԱՆ Ե¹⁶:




Վերին աղյուսասեն կոչվող ավերված գյուղի գերեզմանատան քարե-տապանի վրա փորագրված է.

5. ԱՅՍ Ե ՀԱՆԳԻՍ ՊԱՐՍԵՂ ՌԱԻՍ Թ Ռ.ՃԿԵ (1716 թ.):



Նույն գերեզմանատան մի ուրիշ տապանաքարի վրա գրված է

6. ԱՅՍ Ե ՀԱՆԳԻՍ ՄԱՐՏԻՐՈՍԻ/ ՈՌՆ ԳԱՅ:



Եթե ուղարկածս արձանագրությունները որևէ միտք կամ նպատակ ունի տարեթվերի տեսակետից կամ թե իրենից որևէ հետաքրքրություն ներկայացնում է կարող եմ զանազան տեղերից որպես չուտումնասիրված վայր արտանկարել և ուղարկել:

Հարգանքներով և Ձեր նամակին, պատասխանին սպասող.

¹⁰ Նույն տեղում, էջ 268 – ՅԻՇԵՑԵՔ:

¹¹ Նույն տեղում – և:

¹² Նույն տեղում – ՄԱՏՈՒՐՆ:

¹³ Նույն տեղում – ԱՌԱՔԵԱԼՆ:

¹⁴ Նույն տեղում – և:

¹⁵ Նույն տեղում – ՈՐԴԵՆ:

¹⁶ Նույն տեղում – չիք:

Ազ.ССР, Дашкесанский р-н., С. Кущи, Даллакян Сурен Николаевич
30/XI. 59 г.

– 2 –

Բարև Ձեզ հարգելի ընկ. Սեդրակ Բարխուդարյան: Ներեցեք, որ մի քիչ ուշացրի նամակս: Դե իհարկե կիմանաք, շատ խիստ զբաղված եմ: Ես նորից գնացի այն Ձեզ հայտնած վանքի ավերակները և վերցրի իհարկե մենակ մեկ գրություն և հավանական է, դա հետազայումն է գրվել: Նորից ուսումնասիրեցի այդ տեղանքը և ինձ թվում է, որ այդ գրությունները հետազայի գործեր են: Ուղարկում եմ Ձեզ մի գրություն, վերցրել եմ ճիշտ այնպես, ինչպես գրված է եղել: Խնդրում եմ, ինչքան կարող եք շուտ եկեք, որովհետև շատ ենք անհանգստանում, Ադրբեջանի ակադեմիան կիմանա և չի թողնի ուսումնասիրությունը շարունակվի, ինչպես շատերն են արել: Խնդրում եմ Ձեզ հետ գալիս բերեք այն իմ ասած գրքերը, որովհետև առանց դրանց (էջ 2) չեմ կարող ես աշխատել: Ես մեր դասարանի աշակերտների և մեր տեխնիկական առարկայի դասատու Միշա Վարդանյանի հետ ուսումնասիրեցինք նրանցից քիչ հեռու գտնվող տեղանքը և գտանք գերեզմանոցի հետքեր, զարդաքանդակներ և այլ կավե ամանների հետքեր: Այդ բոլորն այժմ ունենք մեզ մոտ և պահպանում ենք դպրոցում: Ուսումնասիրությունները շարունակում ենք: Դե դրանով կվերջացնեմ իմ փոքրիկ նամակը: Կբարևեք Ձեզ, ձեր ընտանիքին և Գրիգորին:

Բարևներով Շահեն Մասիսենց:

Սպասում ենք Ձեր գալստին: 13. IV.65 թ.

7. ԵՍ ՅԱՎՈՒԲ Ս/ԱՐԳԱՎԱ/ԳՍ ԳԻՐԵՑ ԹՎ ՌԷԶ (1627 թ.):

